

Փոխարկելի փոխառության պայմանագիրը. Վերջին օրենսդրական փոփոխությունները

ՀՀ ազգային ժողովի կողմից 12.05.2025 թվականին ընդունվել է փոխարկելի փոխառության պայմանագրերի կնքման և կատարման ընթացակարգի ներդրման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների փաթեթը: Մասնավորապես, փաթեթով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ՀՀ հարկային օրենսգրքում, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում: Նշված փոփոխությունների փաթեթն ուժի մեջ է մտնելու 12.06.2025 թվականին, իսկ փոփոխությունների գործողությունը տարածվելու է դրանց ուժի մեջ մտնելուց հետո կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա: Ուստի սույն նյութում անդրադարձ կկատարվի նշված փոփոխություններով ներդրված հիմնական կարգավորումներին:

Սույն նյութն անդրադարձ չի կատարում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 39¹ - ին հոդվածի 1-ին մասով նախատեսված ֆինանսական կազմակերպությունների կողմից փոխարկելի փոխառության պայմանագրի կնքման առանձնահատկություններին, ինչպես նաև փոխարկելի փոխառության հարկման կարգավորումներին:

Ինչո՞վ է պայմանավորված փոփոխության անհրաժեշտությունը.

Հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ինչպես նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում ընկերության կանոնադրական կապիտալում ավանդ ներդնելու կամ բաժնետոմսերը

վճարելու պարտականությունից ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով ընկերության մասնակցին/բաժնետիրոջն ազատելու արգելքը, պրակտիկայում բացառվում էր փոխարկելի փոխառության պայմանագրի կնքումը, որի դեպքում տեղի կունենար փոխառությունը վերադարձնելու պարտականության հաշվանց: Փոփոխություններով նշված արգելքի կիրառելիությունը բացառվում է փոխարկելի փոխառության պայմանագրի նկատմամբ:

Ի՞նչ է փոխարկելի փոխառությունը.

Փոխարկելի փոխառության պայմանագրի կնքումը թույլ է տալու բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել փոխառություն՝ միաժամանակ նախատեսելով փոխառության գումարի կամ դրա մասի վերադարձի և (կամ) տոկոսների կամ դրանց մի մասի վճարման պարտավորության փոխարեն այդ ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասնակցության ձեռքբերում: Ընդ որում, նման հնարավորությունը պետք է նախատեսված լինի փոխարկելի փոխառության պայմանագրով ի սկզբանե:

Ավելին, նոր կարգավորումների համաձայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում փոխարկելի փոխառության տրամադրումն ընկերության մասնակից չհանդիսացող երրորդ անձանց հնարավոր չէ միայն այն դեպքում, երբ կանոնադրությամբ արգելվում է կանոնադրական կապիտալի ավելացումը երրորդ անձանց ավանդների միջոցով:

Կարգավորվել է արդյո՞ք արտարժույթով փոխառությունների փոխարկումը և ի՞նչ է նախատեսվել.

Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում դրամային (փողային) ներդրումները բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով կատարելու արգելքը չի վերացվել: Փոխարեն նախատեսվել է, որ արտարժույթով փոխառությունները պետք է նորացվեն և փոխարինվեն դրամային փոխառությամբ, որպիսի դեպքում ներդրումը համարվում է իրականացված ՀՀ դրամով: Ընդ որում, որպես փոխարժեք պարտադիր կերպով հիմք է ընդունվելու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը՝ փոխարկման մասին պահանջը (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեպքում՝ դիմումը) փոխառու ընկերության կողմից ստանալու (կամ ստացված համարվելու) օրվա դրությամբ:

Արդյո՞ք պահանջվում է ընդհանուր ժողովի որոշում փոխարկելի փոխառություն կնքելու համար.

Թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, թե՛ բաժնետիրական ընկերությունների դեպքում փոխարկելի փոխառության պայմանագրի կնքման վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ընկերության բաժնետերերի/մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից (այսուհետ՝ «Ընդհանուր ժողով»):

Երկու ընկերությունների դեպքում էլ նման որոշման ընդունման համար անհրաժեշտ է ձայների միաձայնությունը, սակայն բաժնետիրական ընկերությունների պարագայում ընկերության կանոնադրությամբ հնարավոր է նախատեսել քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի ձայների առնվազն $\frac{3}{4}$ հարաբերակցությամբ որոշման ընդունման հնարավորություն: Վերջին դեպքի կիրառելիության վերաբերյալ սահմանվում է, որ ընկերության այն բաժնետերերը, ովքեր դեմ կքվեարկեն փոխարկելի փոխառության պայմանագրի կնքմանը, կպահպանեն ընկերության կողմից հետագայում թողարկման և տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը: Հետագայում արդեն այդ բաժնետերերի կողմից իրենց նախապատվության իրավունքի իրացման

դեպքում փոխառու ընկերությունը փոխատուի վնասների հատուցման պայմանով կազատվի պարտավորությունը բնեղենով կատարելուց, այն է՝ փոխատուի օգտին իր կանոնադրական կապիտալում բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու պարտավորությունից:

Ե՞րբ և ինչպե՞ս է տեղի ունենում փոխարկումը.

Փոխարկման գործընթացը սկսվում է, երբ փոխատուն ընկերության գործադիր մարմին է ներկայացնում փոխարկման գրավոր պահանջը/դիմումը, որում պետք է լինեն պայմանագրով սահմանված պայմանները վրա հասնելու մասին հիմնավորումներ, եթե փոխարկման իրավունքի առաջացումը պայմանագիրը պայմանավորել է որոշակի պայմաններով: Եթե պայմանագրով նախատեսվել է, որ պայմանագրով սահմանված պայմանները վրա հասնելու դեպքում պահանջը/դիմումը համարվում է ստացված, ապա որպես այդպիսին պայմանները վրա հասնելու պահին առանձին պահանջ/դիմում ներկայացնելու կարիք չի լինելու:

Պահանջը/դիմումը ստանալու կամ ստացված համարելու պահից ընկերության գործադիր մարմինը պետք է հրավիրի ընդհանուր ժողով այնպես, որ նշված պահից 60-օրյա ժամկետում փոխարկման կատարման համար պահանջվող բոլոր որոշումները լինեն կայացված: Փոխարկումը կհամարվի ավարտված կանոնադրական կապիտալի և մասնակիցների կազմի և/կամ բաժնեմասնակցության չափի համապատասխան փոփոխության պետական գրանցման պահից:

Ընդ որում, ՍՊԸ-ների դեպքում փոխատուի ավանդն ընկերության կանոնադրական կապիտալում համարվում է վճարված փոխարկման պահանջն ստանալուց հետո փոխարկման համար անհրաժեշտ որոշումների կայացման պահին, իսկ ԲԸ-երի դեպքում բաժնետոմսերը համարվում են վճարված դրանց տեղաբաշխման պահին:

Միաժամանակ, Էական է նաև, որ փոխարկման դեպքում նոր բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել շուկայական արժեքից ցածր:

Սույն կյուրը կազմվել է 10.06.2025 թվականին:

Հեղինակների մասին

Նարինե Բեգլարյան

**Ավագ գործընկեր,
փաստաբան**




Նարինե Բեգլարյանը ղեկավարում է ընկերության կորպորատիվ իրավունքի և կորպորատիվ վերակազմակերպումների (M&A) պրակտիկան, ինչպես նաև բանկային իրավունքի և կապիտալի շուկաների, անձնական տվյալների պաշտպանության ուղղությունները: Նա տրամադրում է խորհրդատվություն և իրականացնում է ներկայացուցչություն: Ունի փաստաբանի արտոնագիր 2012 թվականից: Կոնցեռն Դիալոգի թիմին է միացել 2013 թվականին:

Ավելի քան 15 տարվա փորձառություն ունեցող Նարինե Բեգլարյանի պրոֆեսիոնալիզմը գնահատված է նաև միջազգայնորեն՝ նա ներառված է հեղինակավոր Chambers Global, Chambers Europe և IFLR1000 հիմնական վարկանիշավորման ցանկերում, ինչպես նաև Legal500-ի վարկանիշավորման առաջատար իրավաբանների ցանկում:

Մինչ Կոնցեռն Դիալոգի թիմին միանալը շուրջ յոթ տարի աշխատել է բանկում և էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերությունում (in-house counsel):

Անի Մկրտումյան

**Իրավաբան,
փաստաբան**



Անի Մկրտումյանը մասնագիտացած է կորպորատիվ իրավունքի, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտներում: Մասնավորապես, նա ներգրավված է ոլորտների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման ու ներկայացուցչության իրականացման աշխատանքներում: Ունի փաստաբանի արտոնագիր 2023 թվականից: Կոնցեռն Դիալոգի թիմին է միացել 2021 թվականին:

Կոնցեռն Դիալոգի մասին

Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակը 1998 թվականից սկսած վստահելի գործընկեր է բիզնեսների և անհատների համար իրավաբանության բոլոր ոլորտներում՝ խորհրդատվությունից մինչև դատական պաշտպանություն: Ընկերությունը ճանաչված է կորպորատիվ իրավունքի, աշխատանքային իրավունքի, մրցակցության իրավունքի, հարկային իրավունքի, պայմանագրային իրավունքի, լիցենզիաների ու թույլտվությունների, ընտանեկան իրավունքի (ներառյալ երեխաների անդրսահմանային առևանգման /child abduction/) ոլորտների պրակտիկայով: Մասնավորապես, մենք մեծ փորձ ունենք SS, հեռահաղորդակցության և մեդիայի, հանքարդյունաբերության, էներգետիկայի, կոմունալ ծառայությունների, բանկային և ֆինանսական, առողջապահության, անշարժ գույքի և ոչ առևտրային գործունեության ոլորտներում: Կոնցեռն Դիալոգի դատավարական փորձառությունը ՀՀ-ում առաջատարներից է, հատկապես բարդ քաղաքացիական, վարչական և արբիտրաժային գործերով: Փաստաբանական գրասենյակի անդամակցությունը TagLaw և Nextlaw ցանցերին և համագործակցությունն առանձին երկրներում գործով տեղական իրավաբանական կազմակերպությունների հետ թույլ է տալիս բարձրորակ ծառայություններ մատուցել հաճախորդներին փաստացիորեն ամբողջ աշխարհում: